

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/9

9 մարտի 2016 թ.

Քննարկվեց «Տրիադա» ՍՊԸ 01.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.01.2016թ-ի թիվ 116/02 որոշման դեմ:

«Տրիադա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

30.01.2015թ. ստացվել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.01.2016թ. կայացված՝ հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 116/02 որոշումը (այսուհետ՝ Վարչական ակտ), որով որոշվել է «Տրիադա» ՍՊԸ-ից (այսուհետ՝ Ընկերություն) գանձել 248.988 ՀՀ դրամ պարտավորության գումար (247.633 ՀՀ դրամ եկամտային հարկի գծով, 1.355 ՀՀ դրամ սոցիալական վճարի գծով):

Գանձման որոշումը կայացվել է Ընկերության վերաբերյալ հարկային մարմնում առկա տեղեկատվության թերի ուսումնասիրության արդյունքում կայացված սխալ եզրահանգումների վրա:

Ընկերությունը ժամանակին պատշաճ կատարել է հարկային բոլոր պարտավորությունները, չկատարված պարտավորություններ չունի: Վարչական ակտով ոչ իրավաչափորեն Ընկերության վրա դրվել է վճարային պարտավորություն՝ հետևաբար Վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման՝ հետևյալ հիմնավորմամբ.

1. Ընկերությունը 2014 և 2015 թվականներին հանդիսացել է Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ: Եկամտային հարկի մասով Ընկերության պարտավորությունների որոշման ժամանակ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի փոխարեն պետք է հիմք ընդունվեր «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը:

Այսինքն՝ Ընկերության վարձու աշխատող հանդիսացած ընտանիքի անդամներից յուրաքանչյուրին վճարված եկամտի համար ամսական եկամտային հարկի գումարը կազմել է 5.000 ՀՀ դրամ:

2. Ընկերությունը սահմանված ժամկետում կատարել է Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պարտավորությունները (սահմանված ժամկետում ներկայացրել է հաշվետվությունները, ժամանակին փոխանցել եկամտային հարկի է սոցիալական վճարի բոլոր գումարները): Բացի «Հարկերի մասին» ՀՀ օրենքով Ընտանեկան ձեռնարկատիրության համար սահմանված տարեկան ներկայացվող հաշվետվություններից, Ընկերությունը, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 23.01.2015թ-ի թիվ 3 պաշտոնական պարզաբանման 10-րդ կետը ներկայացրել է նաև եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկներ (109 ձև), որոնցում պետք է արտացոլվեր միայն սոցիալական վճար կատարող աշխատակցի՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված միայն սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտը ե համապատասխան դրույքաչափով հաշվարկված սոցիալական վճարի գումարը:

3. Չնայած ՀՀ ֆինանսների նախարարի 23.01.2015թ-ի թիվ 3 պաշտոնական պարզաբանման 10-րդ կետում նշված է, որ եկամտային հարկի գումարը հաշվարկում չի արտացոլվում, սակայն գործնականում 2014թ-ի հոկտեմբեր ամսից մինչև 2015թ-ի

սեպտեմբեր ամիսը ներառյալ «Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկում» (109 ձև) համակարգը ավտոմատ հաշվարկել է եկամտային հարկ առանց հաշվի առնելու, որ ընտանեկան ձեռնարկության վարձու աշխատողների եկամտային հարկը անկախ ԱՎՈՒՄ-ի չափից օրենքով սահմանված է 5.000 դրամ:

Ընկերության կողմից հաշվետվությունների ներկայացման ժամանակահատվածում տեխնիկական հնարավորություն չի եղել կարգավորելու, որ համակարգը ավտոմատ չհաշվարկի եկամտային հարկի գումարը, այլ հաշվարկի միայն սոցիալական վճարը: Նախկինում 109 ձևի հաշվետվության մեջ բացակայում էր ներկայումս արդեն նույն ձևի մեջ ավելացված «Համարվում եմ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ» կարգավորումը: Խնդիրը հաշվետվության ձևերի և համակարգի կողմից որոշ դաշտերի նախկինում ավտոմատ լրացման մեջ է: Հետևաբար, եկամտային հարկի մասով Ընկերության պարտավորությունները որոշելիս պետք է հիմք ընդունվեր ոչ թե «Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկը» (109 ձև) այլ «Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի եկամտային հարկի տարեկան անձնավորված հաշվետվությունը» (138 ձև):

4. 2015թ. սեպտեմբեր ամսվա հաշվարկով սոցիալական վճարի պարտավորությունը կազմել է 3.673 դրամ: Այդ գումարն ամբողջությամբ փոխանցվել է դեռևս 25.09.2015թ. թիվ 900005000170 հաշվեհամարին, իսկ գումարը մուտքագրվել է 28.09.2015թ.:

Ընկերությունը թե եկամտային հարկի և թե սոցիալական վճարի մասով չկատարված որևէ պարտավորություն չունի:

Միաժամանակ տեղեկացվում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համակարգի թերության արդյունքում առաջացած նույն խնդրի պատճառով անհիմն վարչական պատասխանատվության չենթարկվելու համար Ընկերությունը նախկինում էլ 31.07.2015թ. Կենտրոնի հարկային տեսչություն ներկայացրել է պարզաբանումներ, այդ նույն թերության արդյունքում էլ 21.01.2016թ. կայացվել է բողոքարկվող վարչական ակտը, ուստի 109 ձևի հաշվետվության նախկին տեխնիկական անկատարության պատճառով Ընկերության եկամտային հարկի պարտավորությունների վերաբերյալ հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա թերի և հակասական տեղեկությունները շտկելու և հետագայում նմանօրինակ վարչական ակտերի կայացման ռիսկերից Ընկերությանը ապահովագրելու համար 2014թ. հոկտեմբերից մինչև 2015թ. սեպտեմբեր ժամանակահատվածի վերաբերյալ 01.02.2016թ. ներկայացվել են եկամտային հարկի և սոցիալական վճարի ճշգրտված ամսական ամփոփ հաշվարկներ՝ օգտագործելով հաշվետվության ձևի «Համարվում եմ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ» կարգավորումը (բացառապես սոցիալական վճարի մասով):

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև Ընկերության կողմից չկատարված պարտավորությունների բացակայության փաստը ընկերությունը խնդրում է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.01.2016թ. թիվ 116/02 որոշումը ճանաչել անվավեր:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Տրիադա» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 20.01.2016թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները

կազմում են 248.988 դրամ: Մասնավորապես, եկամտային հարկի գծով պարտավորությունը կազմում է 247.633 դրամ, որից ապառք 175.040 դրամ, տույժ 64.117 դրամ, տուգանք 8.476 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է 2015թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար ներկայացված հաշվարկներով:

Սոցիալական վճարի (ամսեկան) գծով պարտավորությունը կազմում է 1.355 դրամ, որից ապառք 1.191 դրամ, տույժ 164 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է 2015թ. սեպտեմբեր ամսվա համար ներկայացված հաշվարկով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 21.01.2016թ-ին ընդունվել է թիվ 116/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Տրիադա» ՍՊԸ-ից 248.988 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «Տրիադա» ՍՊԸ-ն 01.10.2014թ-ից համարվել է ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ և 02.10.2014թ-ին Կենտրոնի ՀՏ է ներկայացրել համապատասխան հայտարարություն:

Ընկերությունը 04.03.2015թ-ին ներկայացրել է 2014թ. հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և 2015թ. հունվար և փետրվար ամիսների «Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկները», որոնց «Ամփոփ տվյալներ» բաժնի «Եկամտային հարկ (վճարման ենթակա)» և «Սոցիալական վճար (վճարման ենթակա)» սյունակներում արտոցովել են համապատասխան գումարներ: Նույն ձևով ներկայացվել են նաև 2015թ. մարտ-սեպտեմբեր ամիսների ամփոփ հաշվարկները:

Այսուհետև, 01.02.2016թ-ին ընկերության կողմից ճշգրտվել են 2014թ. հոկտեմբեր-դեկտեմբեր և 2015թ. հունվար-սեպտեմբեր ամիսների «Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկներ»: Ճշգրտված «Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկներ» ներկայացվելու և պարտավորությունների վերահաշվարկ կատարելու արդյունքում Որոշման մեջ արտացոլված եկամտային հարկի գծով պարտավորությունները վերացել են: Մասնավորապես, հարկային պարտավորությունների վերահաշվարկի արդյունքում, ըստ «Հարկատու 3» տեղեկատվական բազայում առկա տվյալների, 20.01.2016թ-ի դրությամբ ընկերության չկատարված պարտավորությունները կազմել են ոչ թե Որոշմամբ գանձման առաջադրված 248.988 դրամ, այլ՝ ընդամենը 1.355 դրամ (սոցիալական վճարի գծով): Ընդ որում, սույն որոշումը կայացվելու դրությամբ սոցիալական վճարի գծով նշված պարտավորությունը դեռ կատարված չէ և կազմում է 1.442 դրամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.01.2016թ-ի թիվ 116/02 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները նվազեցնել 247.633 դրամի չափով:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ